ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1587-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2022 թվականի N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 13-րդ կետում «ցուցատախտակ» բառից առաջ լրացնել «էլեկտրոնային» բառը.

2) 14-րդ կետում «ուղետոմսի» բառից հետո լրացնել «(թղթային կամ էլեկտրոնային)» բառերը.

3) 17-րդ կետի 8-րդ ենթակետում «անհատ ձեռնարկատիրոջ» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ կազմակերպություն)» բառերը.

4) 26-րդ կետում «իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը» բառերը փոխարինել «կազմակերպությունը» բառով.

5) 26-րդ կետի 1-ին ենթակետում «ավտոբուսներ» բառից առաջ լրացնել «մինչև 10 տարեկան և առնվազն 25 նստատեղ ունեցող (ներառյալ վարորդինը)»

բառերը.

6) 26-րդ կետի 2-րդ կետում «երեք» բառը փոխարինել «յոթ» բառով.

7) 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ ենթակետով.

<<3) սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող հավաքակայան, որը պետք է ապահովի կազմակերպության ավտոբուսների կայանատեղերի մակերեսն ու դրանց նախաուղերթային տեխնիկական զննումը կատարելու համար համապատասխան դիտափոսերի երկարությունը՝ համաձայն N 1 աղյուսակի:>>.

8) 26-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ աղյուսակ N 1-ը.

<<Աղյուսակ N 1

NN ը/կ	Ավտոբուս (առանց վարորդի նստատեղի)	Կայանատեղի մակերե յուրաքանչյուր ավտոբ (քառ.մ)
1.	25-30 նստատեղ ներառյալ	39.5
2.	31-40 նստատեղ ներառյալ	46.0
3.	40-ից ավելի նստատեղ	55.2

>>

9) 26.1-րդ կետում «նույնատիպ» բառից հետո լրացնել «(ըստ ավտոբուսների նստատեղերի քանակի)» բառերը.

10) 26.1-րդ կետից հետո լրացնել 26.2-րդ և 26.3-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ.

«26.2. Մրցույթին կարող են մասնակցել նաև այն կազմակերպությունները, որոնք ներկայացրել են երթուղին սպասարկելու համար անհրաժեշտ քանակով մինչև մեկ տարվա արտադրության ավտոբուսներ՝ սեփականության իրավունքով և (կամ) լիզինգով ձեռք բերելու մասին հայտ-պարտավորություն՝ համաձայն N 11 ձևի, և առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրելու փոխադրավարձի վերաբերյալ տեղեկություն՝ սոսնձված և ստորագրված ծրարով:».

26.3 Սույն կարգի 26.2-րդ կետով նախատեսված դեպքում՝ կազմակերպությունն իր հաշվեհամարից լիազոր մարմնի տրամադրած հաշվեհամարին է փոխանցում երթուղիները սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումար (այսուհետ՝ գումար), որը երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում է N 11 ձևում նշված հաշվեհամարին՝ միայն լիազոր մարմնի հետ սպասարկման պայմանագիրը կնքելուց հետո: Գումարը լիազոր մարմնի տրամադրած հաշվեհամարին պետք է փոխանցվի մինչև մրցույթի

անցկացման նախորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ն: Մրցույթին մասնակցելու իրավունք չստացած կամ մրցույթը չհաղթող կազմակերպությունների գումարը փոխանցվում է N 12 ձևում նշված հաշվեհամարին՝ մրցույթի ամփոփիչ նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:>>.

11) 27-րդ կետում հանել <<կամ անհատ ձեռնարկատեր>> բառերը.

12) 33-րդ կետում 40 թիվը փոխարինել 90 թվով.

13) 33-րդ կետում, 35-րդ կետի 2-րդ ենթակետում հանել <<անհատ ձեռնարկատեր>>, իսկ ՁԵ N 1-ի վերնագրում, տեքստում, ՁԵ N 2-ի և ՁԵ N 3-ի վերնագրերում, ՁԵ N 10 աղյուսակի առաջին սյունակում՝ <<կամ անհատ ձեռնարկատերերի>> բառերը.

14) ՁԵ N 6-ի վերնագրում, տեքստում, ՁԵ N 2-ի և ՁԵ N 3-ի վերնագրերում՝ <<կամ անհատ ձեռնարկատիրոջ>> բառերը.

15) XI-րդ բաժինը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<< **XI. ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ**

37. Միջպետական ավտոբուսային երթուղիների սպասարկման ժամկետը սահմանվում է 10 տարի ժամկետով:

38. Երթուղային ցանցը կազմակերպող մարմինը մրցույթի արդյունքները հաստատելուց հետո մրցույթը հաղթող կազմակերպության հետ 10 օրվա ընթացքում կնքում է հայտ-պարտավորությամբ ներկայացված ավտոբուսները ներկայացնելու ժամանակացույց՝ թվով մինչև 100 ավտոբուսների դեպքում առավելագույնը ինը ամիս ժամկետով, 101 և ավելի ավտոբուսների դեպքում՝ առավելագույնը տասներկու ամիս ժամկետով:

38.1. Մրցույթը հաղթող կազմակերպության՝ երթուղին սպասարկելու իրավունքից հրաժարվելու կամ այդ իրավունքից նրան զրկելու դեպքում վաղաժամկետ լուծվում է նրա հետ կնքված սպասարկման պայմանագիրը և հայտարարվում է նոր մրցույթ: Մրցույթը հաղթող կազմակերպությունը երթուղին սպասարկելու իրավունքից հրաժարվելու դեպքում դրա մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին:>>.

16) ՁԵ 1-ի մրցույթի մասնակցության անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի 5-րդ կետը հանել, 2-րդ կետի վերջում լրացնել <<(չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում)>> բառերը, իսկ 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3) ավտոբուսներին ամրակցված վարորդների վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային գրքույկներ, աշխատանքային պայմանագրեր կամ քաղվածք հրամանից, իսկ հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում՝ ավտոբուսների քանակով վարորդների հետ կնքված նախնական պայմանագրեր, վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային գրքույկներ>>.

17) ՁԼ N 3-ի աղյուսակի 1-ին կետի 2-րդ ենթակետի վերջին տողում <<7>> թիվը փոխարինել <<10>> թվով, <<4>> թիվը՝ <<1>> թվով, 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ ենթակետ.

6) Մակնիշի ծագման երկիր՝	
Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) անդամ հանդիսացող պետություններ, Հայաստանի Հանրապետություն	10
այլ պետություններ	8

18) լրացնել ՁԼ N 11 հետևյալ բովանդակությամբ.

<< ՁԼ N 11

Հ Ա Յ Տ - Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Հայտատու_____
_____

(կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Խնդրում եմ թույլատրել մասնակցելու 20 թ. _____ կայանալիք միջպետական ավտոբուսային

_____ երթուղու մրցույթին:

(երթուղու (երթուղիների) անվանումը)

Պարտավորվում եմ, ըստ լիազոր մարմնի հետ կնքված ժամանակացույցի, ձեռք բերել երթուղին(երը) սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված անհրաժեշտ քանակով ավտոբուսներ:

1. Ավտոբուսների մասին տվյալները՝

NN ը/կ	Մակնիշ	Թողարկման տարեթիվ	Քանակ
1.			
2.			
3.			

2. Լրացուցիչ տեղեկություններ՝ _____

_____

Նախապես ծանոթացել եմ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի օրենսդրության պահանջներին և պարտավորվում եմ դրանք կատարել:

Համաձայն եմ լիազոր մարմնի ծանուցումները որպես պաշտոնական ծանուցում ստանալու իմ ներկայացրած էլեկտրոնային հասցեով:

Գումարի փոխանցումը խնդրում եմ կատարել _____ հաշվեհամարին:

Կից ներկայացնում եմ՝

Ավտոբուսներ արտադրող գործարանի կամ իր պաշտոնական ներկայացուցչի տրամադրած՝ ավտոբուսների մատակարարման ժամկետները, տեխնիկական բնութագրերը և գինը սահմանող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում եմ:

Հայտատու _____ _____

(ստորագրությունը) (անուն, ազգանունը)

>>.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն.
Փաշինյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2022 թվականի N ____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1587-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին» N 1587-Ն որոշման հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 13-րդ կետում «ցուցատախտակ» բառից առաջ լրացնել «էլեկտրոնային» բառը.

2) 14-րդ կետում «ուղետոմսի» բառից հետո լրացնել «(թղթային կամ էլեկտրոնային)» բառերը.

3) 17-րդ կետի 8-րդ ենթակետում «անհատ ձեռնարկատիրոջ» բառից հետո լրացնել «(այսուհետ՝ կազմակերպություն)» բառերը.

4) 26-րդ կետում «իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը» բառերը փոխարինել «կազմակերպությունը» բառով.

5) 26-րդ կետի 1-ին ենթակետում «ավտոբուսներ» բառից առաջ լրացնել «մինչև 10 տարեկան և առնվազն 25 նստատեղ ունեցող (ներառյալ վարորդինը)» բառերը.

6) 26-րդ կետի 2-րդ կետում «երեք» բառը փոխարինել «յոթ» բառով.

7) 26-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ ենթակետով.

<<3) սեփականության կամ օգտագործման իրավունքով իրենց պատկանող հավաքակայան, որը պետք է ապահովի կազմակերպության ավտոբուսների կայանատեղերի մակերեսն ու դրանց նախաուղերթային տեխնիկական զննումը կատարելու համար համապատասխան դիտափոսերի երկարությունը՝ համաձայն N 1 աղյուսակի:>>.

8) 26-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ աղյուսակ N 1-ը.

<<Աղյուսակ N 1

NN ը/կ	Ավտոբուս (առանց վարորդի նստատեղի)	Կայանատեղի մակերե յուրաքանչյուր ավտոբ (քառ.մ)
1.	25-30 նստատեղ ներառյալ	39.5
2.	31-40 նստատեղ ներառյալ	46.0
3.	40-ից ավելի նստատեղ	55.2

>>

9) 26.1-րդ կետում «նույնատիպ» բառից հետո լրացնել «(ըստ ավտոբուսների նստատեղերի քանակի)» բառերը.

10) 26.1-րդ կետից հետո լրացնել 26.2-րդ և 26.3-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ.

«26.2. Մրցույթին կարող են մասնակցել նաև այն կազմակերպությունները, որոնք ներկայացրել են երթուղին սպասարկելու համար անհրաժեշտ քանակով մինչև մեկ տարվա արտադրության ավտոբուսներ՝ սեփականության իրավունքով և (կամ) լիզինգով ձեռք բերելու մասին հայտ-պարտավորություն՝ համաձայն N 11 ձևի, և առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրելու փոխադրավարձի վերաբերյալ տեղեկություն՝ սոսնձված և ստորագրված ծրարով:».

26.3 Սույն կարգի 26.2-րդ կետով նախատեսված դեպքում՝ կազմակերպությունն իր հաշվեհամարից լիազոր մարմնի տրամադրած հաշվեհամարին է փոխանցում երթուղիները սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված քանակով ավտոբուսների ընդհանուր արժեքի 1.5 տոկոսին համարժեք գումար (այսուհետ՝ գումար), որը երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցվում է N 11 ձևում նշված հաշվեհամարին՝ միայն լիազոր մարմնի հետ սպասարկման պայմանագիրը կնքելուց հետո: Գումարը լիազոր մարմնի տրամադրած հաշվեհամարին պետք է փոխանցվի մինչև մրցույթի անցկացման նախորդող աշխատանքային օրվա ժամը 12:00-ն: Մրցույթին մասնակցելու իրավունք չստացած կամ մրցույթը չհաղթող

կազմակերպությունների գումարը փոխանցվում է N 12 ձևում նշված հաշվեհամարին՝ մրցույթի ամփոփիչ նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում։>>.

11) 27-րդ կետում հանել <<կամ անհատ ձեռնարկատեր>> բառերը.

12) 33-րդ կետում 40 թիվը փոխարինել 90 թվով.

13) 33-րդ կետում, 35-րդ կետի 2-րդ ենթակետում հանել <<անհատ ձեռնարկատեր>>, իսկ Ձև N 1-ի վերնագրում, տեքստում, Ձև N 2-ի և Ձև N 3-ի վերնագրերում, Ձև N 10 աղյուսակի առաջին սյունակում՝ <<կամ անհատ ձեռնարկատերերի>> բառերը.

14) Ձև N 6-ի վերնագրում, տեքստում, Ձև N 2-ի և Ձև N 3-ի վերնագրերում՝ <<կամ անհատ ձեռնարկատիրոջ>> բառերը.

15) XI-րդ բաժինը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

<< XI. ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

37. Միջպետական ավտոբուսային երթուղիների սպասարկման ժամկետը սահմանվում է 10 տարի ժամկետով։

38. Երթուղային ցանցը կազմակերպող մարմինը մրցույթի արդյունքները հաստատելուց հետո մրցույթը հաղթող կազմակերպության հետ 10 օրվա ընթացքում կնքում է հայտ-պարտավորությամբ ներկայացված ավտոբուսները ներկայացնելու ժամանակացույց՝ թվով մինչև 100 ավտոբուսների դեպքում առավելագույնը ինը ամիս ժամկետով, 101 և ավելի ավտոբուսների դեպքում՝ առավելագույնը տասներկու ամիս ժամկետով։

38.1. Մրցույթը հաղթող կազմակերպության՝ երթուղին սպասարկելու իրավունքից հրաժարվելու կամ այդ իրավունքից նրան զրկելու դեպքում վաղաժամկետ լուծվում է նրա հետ կնքված սպասարկման պայմանագիրը և հայտարարվում է նոր մրցույթ։ Մրցույթը հաղթող կազմակերպությունը երթուղին սպասարկելու իրավունքից հրաժարվելու դեպքում դրա մասին առնվազն երկու ամիս առաջ գրավոր տեղեկացնում է լիազոր մարմնին։>>.

16) Ձև 1-ի մրցույթի մասնակցության անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի 5-րդ կետը հանել, 2-րդ կետի վերջում լրացնել <<(չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում)>> բառերը, իսկ 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<3) ավտոբուսներին ամրակցված վարորդների վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային գրքույկներ, աշխատանքային պայմանագրեր կամ քաղվածք հրամանից, իսկ հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում՝ ավտոբուսների քանակով վարորդների հետ կնքված նախնական պայմանագրեր, վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային գրքույկներ>>.

17) Ձև N 3-ի աղյուսակի 1-ին կետի 2-րդ ենթակետի վերջին տողում <<7>>

թիվը փոխարինել <<10>> թվով, <<4>> թիվը՝ <<1>> թվով, 5-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ ենթակետ.

6) Մակնիշի ծագման երկիր՝

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) անդամ հանդիսացող պետություններ, Հայաստանի Հանրապետություն	10
այլ պետություններ	8

18) լրացնել ՁԵՎ N 11 հետևյալ բովանդակությամբ.

<< ՁԵՎ N 11

Հ Ա Յ Տ - Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Հայտատու_____
_____

(կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), գտնվելու վայրը (բնակության վայրը), հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Խնդրում եմ թույլատրել մասնակցելու 20 թ. _____ կայանալիք միջպետական ավտոբուսային

_____ երթուղու մրցույթին:

(երթուղու (երթուղիների) անվանումը)

Պարտավորվում եմ, ըստ լիազոր մարմնի հետ կնքված ժամանակացույցի, ձեռք բերել երթուղին(երը) սպասարկելու մրցույթ անցկացնելու մասին հայտարարությամբ սահմանված անհրաժեշտ քանակով ավտոբուսներ:

1. Ավտոբուսների մասին տվյալները՝

NN ը/կ	Մակնիշ	Թողարկման տարեթիվ	Քանակ
1.			
2.			
3.			

2. Լրացուցիչ տեղեկություններ՝ _____

_____

Նախապես ծանոթացել եմ Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառի օրենսդրության պահանջներին և պարտավորվում եմ դրանք կատարել:

Համաձայն եմ լիազոր մարմնի ծանուցումները որպես պաշտոնական ծանուցում ստանալու իմ ներկայացրած էլեկտրոնային հասցեով:

Գումարի փոխանցումը խնդրում եմ կատարել _____ հաշվեհամարին:

Կից ներկայացնում եմ՝

Ավտոբուսներ արտադրող գործարանի կամ իր պաշտոնական ներկայացուցչի տրամադրած՝ ավտոբուսների մատակարարման ժամկետները, տեխնիկական բնութագրերը և գինը սահմանող փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերի իսկությունը հավաստում եմ:

Հայտատու _____ _____

(ստորագրությունը) (անուն, ազգանունը)

>>.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը

հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան